

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ

---

Հեղինակ՝ Հ. Մնացականյան




# ՓՈՂԻ ՇՈՒԿԱՆ ԵԿՎԱՄՈՒՏՆԵՐԻ և ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ

- Ապրանքների շուկա
- Ռեսուրսների շուկա
- Տնային տնտեսություններ
- Ֆիրմաներ



# ՇՐՋԱՊՏՈՒՅՏԻ ՊԱՐՉԱԳՈՒՅՆ ՄՈԴԵԼ



# ՇՐՋԱՊՏՈՒՅՏԻ ՊԱՐՉԱԳՈՒՅՆ ՄՈԴԵԼ

- 1 և 2-րդ տողերը բնութագրում են ռեսուրսների հոսքը
- 3 և 4-րդ տողերը բնութագրում են ապրանքների հոսքը
- 5 -րդ տողը - տնային տնտեսությունների եկամուտները
- 6-րդ տողը - ծախսեր՝ վճարներ ռեսուրսների գնման համար
- 7-րդ տողը - ֆիրմաների եկամուտներ ապրանքների վաճառքից
- 8-րդ տողը - ծախսեր՝ վճարներ ապրանքների գնման համար




# ՇՐՋԱՊՏՈՒՅՏԻ ՊԱՐՉԱԳՈՒՅՆ ՄՈԴԵԼ

- ապրանքների և ծառայությունների շուկայում հավասարակշռված առաջարկ և պահանջարկ
- ռեսուրսների շուկայում հավասարակշռված առաջարկ և պահանջարկ
- ապրանքների և ծառայությունների ներհոսքը դեպի տնտեսություն, ինչպես նաև արտահոսքը տնտեսությունից բացակայում են փակ տնտեսական համակարգում և հավասար են բաց տնտեսական համակարգում
- ֆինանսական ներհոսքը և արտահոսքը հավասար են բաց տնտեսական համակարգում և բացակայում են փակում:



# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ



# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ

- Խնայողությունների հոսքը տնային տնտեսություններից դեպի ֆինանսական շուկաներ
- վարկեր և ինվեստիցիաներ
- ուղղակի ֆինանսավորում





# ՊԵՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԸ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ

- 1-ին կապը ապահովում է պետության հարկային եկամուտները /հարկեր/:
- 2-ը՝ տնային տնտեսություններին տրվող տրանսֆերտ վճարներն են, որոնք կառավարության կողմից տնային տնտեսություններին միակողմանի, անհատույց վճարումներն են թոշակի, կենսաթոշակի, գործազրկության վճարների տեսքով:
- 3-ը՝ պետական գնումներն են, որոնք կառավարության կողմից վճարված գումարներն են ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար:
- 4-ը՝ երկողմանի կապն է պետության և ֆինանսական շուկաների միջև:



# ՊԵՏԱԿԱՆ ՍԵԿՏՈՐԸ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ

/կապ պետության և ֆինանսական շուկաների միջև/

- Փոխառություններ բնակչությունից /ներքին պետական պարտք/
- Փոխառություններ օտարերկրյա կառավարություններից /արտաքին պետական պարտք/
- Փոխառություններ միջազգային ֆինանսական կազմակերպություններից



# ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ

- Առևտրային հաշվեկշիռը
- Վճարային հաշվեկշիռը



# ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ /Վճարային հաշվեկշիռ/

## 1. Առևտրային ընթացիկ հաշիվ

- Ապրանքների և ծառայությունների արտահանում
- Ապրանքների և ծառայությունների ներմուծում
- Չուտ ներմուծում կամ արտահանում

## 2. Կապիտալի ընթացիկ հաշիվ


- Կապիտալի արտահոսք
- Կապիտալի ներհոսք
- Կապիտալի զուտ արտահոսք կամ ներհոսք

## 3. Պետական պաշտոնական պահուստների ընթացիկ հաշիվ

- ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական պահուստները օտարերկրյա կենտրոնական բանկերում
- Օտարերկրյա ԿԲ-ի պաշտոնական պահուստները ՀՀ ԿԲ-ում
- Չուտ պաշտոնական պահուստներ



# ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ



# ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՇՐՋԱՊՏՈՒՅՏՈՒՄ

- 1-ը՝ ներմուծումն է /դիտարկված է դրամական հոսքը/:
- 2-ը՝ արտահանումն է, որը օտարերկրյա գնորդների վճարներն են գնված ապրանքների և ծառայությունների դիմաց:
- 3-ը՝ կապիտալի զուտ հոսք:



# ՇՐՋԱՊՏՈՒՅՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

$$ԱԱ = C + G + I + (EX - IM)$$

$$ԱԵ = C + S + T$$

$$ԱԱ = ԱԵ = C + G + I + (EX - IM) = C + S + T$$

$$I + G + EX = S + T + IM$$

$$I + (G - T) = S + (IM - EX)$$



# ՓՈՂԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ

- ☞ շրջանառության միջոց
- ☞ արժեքի չափի միջոց
- ☞ խնայողության կամ կուտակման միջոց



# ԴՐԱՄԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ

- **M 1**
- **M 2**
- **M 3**
- **L**



# ԴՐԱՄԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏ M1

1. Շրջանառության մեջ կանխիկ մետաղադրամ և թղթադրամ

2. Տրանզակցիոն դեպոզիտներ

ա/ ցպահանջ ակտիվներ

բ/ այլ չեկային ավանդներ



# ԴՐԱՄԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏ M2

1. M1
2. Դրամական շուկայի փոխադարձելիության հիմնադրամներ
3. Դրամական շուկայի դեպոզիտային հաշիվներ
4. Խնայողական ավանդներ
5. Ժամկետային ավանդներ
6. Հետգնման մեկօրյա համաձայնագրեր
7. Մեկօրյա փոխառություններ Եվրոդոլարով



# ԴՐԱՄԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏ M3

1. M2
2. Դեպոզիտային սերտիֆիկատներ
3. Հետգնման ժամկետային համաձայնագրեր
4. Ժամկետային փոխառություններ Եվրոդոլարով
5. Դրամական շուկայի փոխադարձելիության հիմնադրամի բաժնետոմսեր



# ԴՐԱՄԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏ L

1. M3
2. Բանկային ակցեպտներ
3. Առևտրային արժեթղթեր
4. Գանձապետական մուրհակներ
5. Խնայողական պարտատոմսեր



# ԴՐԱՄԱԿԱՆ ԲԱԶԱ և ՉԱՆԳՎԱԾ

$$BM = m * MB, m > 1$$

BM - դրամական զանգված

MB - դրամական քաղա

m - դրամական քաղնապատկիչ



# ԱՐԺԵՔՊԹԵՐԻ ՇՈՒԿԱ

Արժեքների շուկաների տեսակներից կարելի է առանձնացնել՝

- Միջազգային և ազգային արժեքների շուկան
- Ազգային և ռեզիդնալ շուկաներ
- Արժեքների կոնկրետ տեսակների շուկաներ
- Պետական և կորպորատիվ արժեքների շուկաներ
- Առաջնային և երկրորդային արժեքների շուկաներ



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱ

## /Արժեթղթերի շուկայի կարգավորում/

- շուկայի պետական կարգավորում,
- շուկայի կարգավորում մասնագիտացված անձանց կողմից կամ ինքնակարգավորում,
- հասարակական կարգավորում կամ կարգավորում հասարակական կարծիքի միջոցով:



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

1. Ներդրումային ֆունկցիա
2. Սեփականության տրանսֆորմացիայի ապահովման ֆունկցիա
3. Ռիսկերի վերաբաշխման ֆունկցիա
4. Իրացվելիության ապահովման ֆունկցիա
5. Կապիտալի հոսունության ապահովման ֆունկցիա



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

- Էմիսենտներ
- Ինվեստորներ
- Ֆոնդային միջնորդներ
- Արժեթղթերի շուկան սպասարկող կազմակերպություններ
- Կարգավորման և վերահսկման պետական մարմիններ



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արժեթղթերի շուկայի կազմակերպիչներին /ֆոնդային բորսայի կազմակերպիչներ/
- Հաշվարկային կենտրոններ
- Դեպոզիտարիաներ
- Ռեգիստրներ
- Ինֆորմացիոն կենտրոններ



# ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ

Բորսայի հիմնական խնդիրներն են.

- Շուկայի համար տարածքի տրամադրում, որտեղ և կվաճառվեն, և կգնվեն տարբեր տեսակի արժեթղթեր
- Հավասարակշռված բորսայական գնի կայացում
- Կուտակել ժամանակավորապես ազատ դրամական միջոցները և աջակցել սեփականության իրավունքի փոփոխման գործընթացին
- Բորսայական առևտրի թափանցիկության ապահովում
- Արբիտրաժի ապահովում
- Գործարքների իրականացման երաշխիքների տրամադրում
- Բորսայական առևտրի մասնակիցների վարքի, էթիկական ստանդարտների մշակում



## ԷՄԻՏԵՆՏՆԵՐ/ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐ/

Էմիտենտը իրավաբանական անձ է կամ պայմանագրով միմյանց հետ կապված իրավաբանական անձանց խումբ, կամ էլ պետական, ինչպես նաև տեղական կառավարման մարմին, որը կրում է արժեթղթերի թողարկման հետ կապված պարտավորություն ինվեստորի առջև:



# ԻՆՎԵՍՏՐՆԵՐ /ՆԵՐԴՐՈՂՆԵՐ/

- Անհատական` ֆիզիկական անձ
- Ինստիտուցիոնալ` կորպորատիվ ինստիտուտներ, պետություն
- Մասնագիտացված անձիք



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ

Արժեթղթերի շուկայում կառավարման ընկերությունների գործունեության տնտեսական իմաստը կայանում է հետևյալում`

- ◆ Մասնագիտացման արդյունքում հաճախորդների արժեթղթերի կառավարումից լավագույն արդյունքների ստացում,
- ◆ Ֆոնդային բորսայում գործարքների սպասարկման փոքր ծախսեր` ի հաշիվ ծավալուն գործունեության,
- ◆ Գործունեության բարձր արդյունավետություն` ի հաշիվ տարբեր երկրների շուկաներում միաժամանակյա գործունեություն:



# ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՆԵՐ

Դեպոզիտարիայի հիմնական ֆունկցիաներն են՝

- համաձայն հաճախորդի հետ կնքած պայմանագրի դեպո հաշիվների վարում
- արժեթղթերի սերտիֆիկատների պահպանում
- էմիտենտի և ինվեստորի միջև միջնորդի ֆունկցիայի իրականացում:



# ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական նպատակներն են.

- շուկայի մասնակիցների հաշվարկային սպասարկման մինիմալ ծախսեր,
- հաշվարկների իրականացման ժամկետների կրճատում,
- հաշվարկների իրականացման բոլոր ռիսկերի մինիմիզացում:



# ԱՐԺԵԹՈՒՂԹ, ԱՐԺԵԹՂԹԻ ԷՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

- Արժեթուղթը իրացվելի ակտիվ է,
- Արժեթուղթը շրջանառելի ակտիվ է,
- Արժեթուղթը շուկայական ակտիվ է,
- Արժեթուղթը ունի անվանական արժեք, էմիսիոն և շուկայական գին:



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

- Ըստ սեփականության իրավունքի /պատկանելիության/
- Ըստ տնտեսության մեջ ունեցած դերի
- Ըստ թողարկողների
- Ըստ շրջանառելիության
- Ըստ ժամկետայնության
- Ըստ այլ չափանիշների



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Ըստ սեփականության իրավունքի /պատկանելիության/

- անվանական, որի դեպքում սեփականատիրոջ անունը նշվում է արժեթղթի վրա կամ/և սեփականատերերի ռեեստրում:
- ըստ ներկայացնողի, որի դեպքում սեփականատիրոջ անունը չի ֆիքսվում արժեթղթի վրա, իսկ շրջանառությունը չի սահմանափակվում որևէ գրանցումով:
- օրդերային, որն իր մեջ ներառում է վերը թվարկված բոլոր հատկանիշները: Այն սեփականության իրավունքով արժեթուղթ է, որը պատկանում է նրան, ում անվամբ թողարկված է կամ էլ նրան, ով լիազորված է վերջինիս կողմից:



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Ըստ տնտեսության մեջ ունեցած դերի

- **Հիմնական արժեթղթեր:** Այն արժեթղթերն են, որոնց հիմքում դրված է որևէ ակտիվի նկատմամբ գույքային իրավունք:
- **Օժանդակ արժեթղթեր,** որոնք արժեթղթերի վերաբերյալ արժեթղթեր են:
- **Ածանցյալ արժեթղթեր:** Դրանք որևէ գնային ակտիվի վերաբերյալ արժեթղթեր են:



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Ըստ թողարկողների

- Պետական
- Կառավարման տեղական մարմինների
- Կորպորատիվ



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Ըստ շրջանառելիության

- Շուկայական
- Ոչ շուկայական



# ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

## Ըստ ժամկետայնության

- Կարճաժամկետ
- Միջին ժամկետ
- Երկարաժամկետ



# ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ ԲԱԺՆԵՏՈՄՍ

Բաժնետոմսը սահմանված ձևի և բովանդակության արժեքուղթ է, որը վկայում է ընկերության կանոնադրական կապիտալում որոշակի մասնաբաժին ներդնելու մասին:



# ԲԱԺՆԵՏՈՄԱԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Այն սեփականության տիտղոսագիր է, այսինքն բաժնետոմսի սեփականատերը հանդիսանում է բաժնետիրական ընկերության սեփականատերը՝ համապատասխան իրավունքներով:
- Այն չունի գոյության ժամկետ, այսինքն բաժնետոմսի սեփականատիրոջ իրավունքները պահպանվում են այնքան ժամանակ, որքան գոյություն ունի բաժնետիրական ընկերությունը:
- Բաժնետոմսերը կարող են կոնսոլիդացվել կամ էլ փոշիացվել:



# ԲԱԺՆԵՏՈՄՄԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բաժնետոմսի համար բնորոշ է սահմանափակ պատասխանատվությունը, քանի որ բաժնետերը պատասխանատվություն չի կրում բաժնետիրական ընկերության պարտավորությունների համար: Այդ իսկ պատճառով ներդրողը կարող է կորցնել այն գումարը, որը նա օգտագործել է բաժնետոմս գնելու համար:
- Բաժնետոմսին բնորոշ է անբաժանելիությունը, այսինքն բաժնետոմսի համատեղ տիրապետումը կապված չէ սեփականատերերի իրավունքների բաժանման հետ, նրանք բոլորը հանդես են գալիս որպես 1 անձ:



# ԲԱԺՆԵՏՈՄՄԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- բաժնետիրական ընկերության անվանումը և իրավաբանական հասցեն,
- արժեթղթի տեսակի անվանումը՝ տվյալ դեպքում «բաժնետոմս»,
- կանոնակարգված համարը,
- թողարկման ամսաթիվը,
- բաժնետոմսի տեսակը՝ հասարակ կամ արտոնյալ,
- անվանական գինը,
- տնօրինողի հասցեն,
- բաժնետոմսի թողարկման օրվա դրությամբ կանոնադրական կապիտալի չափը,
- թողարկված բաժնետոմսերի քանակը,
- դիվիդենդների վճարման ժամկետը,
- ընկերության նախագահի ստորագրությունը,



# ԲԱԺՆԵՏՈՄՄԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- ՀԱՍԱՐԱԿ
- ԱՐՏՈՆՅԱԼ



# ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

- Կապույտ ֆիշկաներ - առավել հայտնի և կայուն բաժնետոմսերն են արժեթղթերի շուկայում, որոնց դիմաց վճարվում են կայուն և բարձր դիվիդենդներ՝ անկախ տվյալ ընկերության ֆինանսատնտեսական վիճակից:
- Աճի բաժնետոմսեր - հեռանկարային ընկերությունների բաժնետոմսերն են, որոնց դիմաց դիվիդենդները վճարվում են փոքր չափերով, իսկ ընկերության շահույթի հիմնական մասը ուղղվում է բիզնեսի զարգացմանը:
- Եկամտաբեր բաժնետոմսեր - հաստատագրված եկամտով պարտատոմսերի եկամտաբերությանը չզիջող եկամտաբերությամբ բաժնետոմսերն են:



# ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

- Ցիկլային բաժնետոմսեր - այս բաժնետոմսերի դիմաց ստացված դիվիդենտի մեծությունը տատանվում է՝ կապված փզգնեսի սեզոնային /ցիկլային/ բնույթից:
- Ռիսկային բաժնետոմսեր- փոքր և միջին փզգնեսի, ինչպես նաև նոր ստեղծվող բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերն են, որոնց շուկայական գինը շատ արագ փոփոխվում է, իսկ դիվիդենտները վճարվում են փոքր չափերով:
- Պաշտպանված բաժնետոմսեր - շուկայի կառուցվածքի արագ փոփոխման պայմաններում բավական կայուն գին ունեցող բաժնետոմսեր են: Հիմնականում դրանք սննդի, դեղերի արդյունաբերության և կենցաղային սպասարկման ոլորտի ընկերությունների բաժնետոմսերն են, որոնց արտադրանքի նկատմամբ պահանջարկը միշտ կայուն է շուկայի թե քարենպաստ, թե անքարենպաստ պայմաններում:



## ԲԱԺՆԵՏՈՄՄԻ ԱՐԺԵՔ

Այն հետևյալում, երբ տարեկան դիվիդենդները հաստատուն են, սովորական բաժնետոմսի իրական արժեքը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$V_t = DIV / R, \text{ որտեղ }`$$

$V_t$  - բաժնետոմսի իրական գինն է,

$R$ -ը - այլընտրանքային տոկոսադրույքն է,

$DIV$  - վճարվելիք դիվիդենդները:

Եթե նախատեսվում է դիվիդենդի և ռիսկի աճ, ապա բանաձևը կունենա հետևյալ տեսքը.

$$V_t = (DIV + \Delta DIV) / (R + \Delta R), \quad \text{որտեղ }`$$

$\Delta DIV$ -ը - դիվիդենդի սպասվող աճն է,

$\Delta R$  -ը - ռիսկի դիմաց վճարն է:



# ԲԱԺՆԵՏՈՄԱԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Բաժնետոմսի եկամտաբերությունը 1 տարվա համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$R = 100 * (DIV + (P_1 - P)) / P, \quad \text{որտեղ՝}$$

R-ը - եկամտաբերությունն է,

$P_1$  - արժեթղթի վաճառքի գինն է,

P - արժեթղթի գնման գինն է



# ԲԱԺՆԵՏՈՄՄԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ինվեստիցիոն ժամանակահատվածը գերազանցում է 1 տարին, ապա բաժնետոմսի եկամտաբերության բանաձևը ունի հետևյալ տեսքը.

$$R = 100 * (DIV_t + (P_n - P)) / P * T, \quad \text{որտեղ`}$$

$P_n$  - արժեթղթի վաճառքի գինն է,

$T$  - այն ժամանակահատվածն է, որի ընթացքում բաժնետոմսը գտնվել է ինվեստորի ձեռքում:



# ՊԱՐՏԱՏՈՄ

Պարտատոմս է կոչվում այն արժեթուղթը, որը վկայում է իր տնօրինողի կողմից ֆինանսական միջոցների ներդրման մասին, ինչպես նաև թողարկողի պարտքային պարտավորության մասին՝ այն է վերադարձնել պարտատոմսի անվանական արժեքը և տոկոսագումարները նախատեսված ժամկետին:



# ՊԱՐՏԱՏՈՄՄԻ ԿՈՒՐՍ

$$K = (P_t / N_o) * 100, \quad \text{որտեղ}$$

$K$  - պարտատոմսի կուրսն է,

$P_t$  - պարտատոմսի շուկայական գինն է,

$N_o$  - պարտատոմսի անվանական արժեքն է:



# ՋԵՂՉԱՅԻՆ /ԴԻՍԿՈՆՏԱՅԻՆ/ ՊԱՐՏԱՏՈՄՍ

Դիսկոնտային պարտատոմսի վաճառքի գինը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$P_d = (N / (1 + R * T)) * 100, \text{ որտեղ}$$

$P_d$  - զեղչային պարտատոմսի վաճառքի գինն է,

$N$  - պարտատոմսի անվանական գինը,

$T$  - պարտատոմսի մարման տարիների թիվը,

$R$  - վերաֆինանսավորման տոկոսադրույքը /այլընտրանքային տոկոսադրույքը/



# ՊԱՐՏԱՏՈՄՍԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Պարտատոմսի ընթացիկ եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$L_c = (R/K) * 100, \quad \text{որտեղ}$$

$L_c$  = պարտատոմսի ընթացիկ եկամտաբերությունն է,

R - տարեկան վճարվող տոկոսագումարները,

K - պարտատոմսի կուրսը ձեռք բերման պահին:



# ՊԱՐՏԱՏՈՄՍԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Պարտատոմսի լրիվ կամ մարման պահին եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$L_f = ((R+d)/(K*T))*100, \text{ որտեղ}$$

$L_f$  - պարտատոմսի եկամտաբերությունն է մարման պահին,

$d$  - պարտատոմսի դիսկոնտի մեծությունն է,

$T$  - այն տարիների թիվը, որի ընթացքում պարտատոմսը գտնվել է ինվեստորի մոտ:



# ՄՈՒՐՀԱԿ, ՄՈՒՐՀԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Մուրհակը գրավոր փաստաթուղթ է պարտքային պարտավորության մասին, որը հավաստում է մի կողմի պարտավորությունը մուրհակում նշված գումարը նշված ժամկետին վճարել մյուս կողմին:

Մուրհակը ըստ թողարկողի լինում է երկու տեսակի՝

- կորպորատիվ
- պետական

Մուրհակը ըստ սեփականության իրավունքի ևս լինում է երկու տեսակի՝

- հասարակ
- փոխանցվող




# ՄՈՒՐՀԱԿԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Մուրհակը գործուն լիկվիդային արժեթուղթ է և կատարում է հետևյալ ֆունկցիաները.

- Առևտրային գործարքների իրականացման ֆունկցիա,
- Ֆինանսական, այդ թվում վարկային գործարքների իրականացման ֆունկցիա,
- Կարող է հանդես գալ որպես ապահովում ֆինանսական և առևտրային գործարքներում:



# ՓՈԽԱՆՑՎՈՂ ՄՈՒՐՀԱԿ



# ԱԾԱՆՑՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ /Ժամկետային համաձայնագրեր/

Որպես ժամկետային համաձայնագրերի տարատեսակներ կարող են հանդես գալ.

- Ֆորվարդային համաձայնագրերը
- Ֆյուչերսային համաձայնագրերը
- Օպցիոն համաձայնագրեր



# ԱԾԱՆՑՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ /Ժամկետային համաձայնագրեր/

- Ֆորվարդային պայմանագրերը իրենցից ներկայացնում են նախապես պայանավորված գնով ապագայում ապրանքի գնման կամ վաճառքի արտաբորսայական պարտադիր ժամկետային գործարքներ:
- Ֆյուչերսային պայմանագիրը, որը նախապես պայանավորված գնով ապագայում ապրանքի՝ արժեթղթի, գնման կամ վաճառքի բորսայական պարտադիր ժամկետային գործարք է:
- Օպցիոնը իրենցից ներկայացնում է նախապես պայմանավորված գնով և ժամկետներում ապրանք գնելու կամ վաճառելու իրավունք:



# ՕՊՑԻՈՆԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Գոյություն ունի օպցիոնի 2 տեսակ.

- Գնման օպցիոն /call option/
- Վաճառքի օպցիոն /put option/



# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵՆԵՉՄԵՆԹ

Համաշխարհային պրակտիկայում գոյություն ունի տոկոսային եկամտի հաշվարկման 2 եղանակ՝

- Դեկուրսիվ
- Անտիսիպատիվ



# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԵԼԱՃ /պարզ տոկոսադրույք/

Կատարենք հետևյալ նշանակումները.

$R$  (%) - տարեկան պարզ տոկոսադրույքի տոկոսային մեծություն

$R$  - տարեկան պարզ տոկոսադրույքի հարաբերական մեծություն

$V_{տ}$  - տոկոսատեկամտի տարեկան մեծություն

$V$  - հաշվեգրման ամբողջ ժամանակաշրջանի տոկոսատեկամտի ընդհանուր գումար

$P$  - նախնական ներդրված գումար

$S$  - աճած գումար

$S_k$  - աճման գործակից

$N$  - հաշվեգրման ժամանակաշրջանը տարիներով

$L$  - հաշվեգրման ժամանակաշրջանը օրերով

$K$  - օրերի քանակը տարում

$K$ -ն հանդիսանում է տոկոսների հաշվարկման ժամանակային բազան: Այն սովորաբար ընդունում են կամ 360 օր կամ էլ 365 օր:



# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԵԼԱՃ /պարզ տոկոսադրույք/

$$R (\%) = (V_{\text{տ}}/P) * 100\%$$

$$R = V_{\text{տ}}/P \text{ կամ } V_{\text{տ}} = P * R$$

$$V = V_{\text{տ}} * N$$

$$S = P + V$$

$$S_k = S/P$$

$$N = L/K$$

$$S = P + V = P + V_{\text{տ}} * N = P + P * R * N = P(1 + N * R)$$

$$S = P(1 + N * R) \text{ կամ էլ } S = P(1 + L/K * R)$$



# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԵԼԱԾ /պարզ գեղադրույթ/

Կատարենք հետևյալ նշանակումները.

$d$  (%) - տարեկան պարզ գեղադրույթի տոկոսային մեծություն

$d$  - տարեկան պարզ գեղադրույթի հարաբերական մեծություն

$D_{տ-1}$  - 1 տարվա ընթացքում վճարված գեղագումարներն են

$D$  - հաշվեգրման ամբողջ ժամանակաշրջանի գեղաեկամտի ընդհանուր գումար

$P$  - նախնական գումար

$S$  - աճած գումար

$n$  - հաշվեգրման ժամանակաշրջանը տարիներով



# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԵԼԱՃ /պարզ գեղչադրույք/

$$d = D_{un} / S$$

$$D_{un} = d * S$$

$$D = D_{un} * n = n * d * S$$

$$P = S - D = S - n * d * S = S(1 - n * d)$$

$$S = P / (1 - n * d)$$



# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԵԼԱՃ /բարդ տոկոսադրույք/

$$S_1 = P(1+r)$$

$$S_2 = S_1(1+r) = P(1+r)(1+r) = P(1+r)^2$$

$$S_n = P(1+r)^n$$

Եթե (n) տարիների ընթացքում բարդ տոկոսադրույքով հաշվեգրումը իրականացվում է տարեկան (m) անգամ, ապա բանաձևը ստանում է հետևյալ տեսքը.

$$S_{mn} = P(1+j/m)^{mn}$$



# ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԵԼԱՃ /բարդ զեղչադրույթ/

$$S=P/(1-d)^n$$

Եթե (n) տարիների ընթացքում զեղչագումարները հաշվեգրվում են տարեկան (m) անգամ, ապա.

$$S=P/(1-f/m)^{mn}$$



# ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ

$$r = ((1+r)^n - 1)/n$$

$$r = ((1+j/m)^{mn} - 1)/n, \text{ որտեղ}$$

$r$  - տարեկան պարզ տոկոսադրույքի հարաբերական մեծություն

$d$  - տարեկան պարզ զեղչադրույքի հարաբերական մեծություն

$r_c$  - տարեկան բարդ տոկոսադրույքի հարաբերական մեծություն

$d_c$  - տարեկան բարդ զեղչադրույքի հարաբերական մեծություն

$j$  - անվանական տարեկան տոկոսադրույք



# ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ և ՄՂԱՃ

$$S_L - S = \Delta S$$

$$(S_L - S)/S = \Delta S/S = L$$

$$S_L = S + \Delta S = S + S * L = S(1 + L)$$

$$S_L = P(1 + R)(1 + L)$$

Մյուս կողմից, եթե տարեկան ինֆլյացիայի տեմպը հավասար է  $L$ -ի, ապա

$$S_L = P(1 + R_L)$$

$$P(1 + R_L) = P(1 + R)(1 + L)$$

$$R_L = R + L + R * L$$



# ԱՆՈՒԻՏԵՏՆԵՐ

Գոյություն ունի անուիտետի 2 տեսակ.

- սովորական /պոստնումերանդո/
- ոչ սովորական /պրենումերանդո/



# ԱՆՈՒԻՏԵՏՆԵՐ

Առաջին վճարի ավելացված գումարը  $S_1$ -ը, որի վրա տոկոսագումարները հաշվեգրվելու են  $(n-1)$  անգամ, հավասար է՝

$$S_1 = P(1+R_c)^{n-1}$$

$$S_2 = P(1+R_c)^{n-2}$$

$$S_n = P$$

Ընդհանուր առմամբ ստանում ենք, որ

$$S = P \sum_{t=1}^n (1+R_c)^{t-1}$$

Այլ կերպ հավասարումը ունի հետևյալ տեսքը՝

$$S = P((1+R_c)^n - 1)/R_c$$

Ոչ սովորական անուիտետի դեպքում՝

$$S = (1 - (1+R_c)^{-n})/R_c (1+R_c)^n$$

